

Եվրոպական Դատարանի պրակտիկան և ընթացակարգը. վճիռը և դրա կատարումը

4.1 ՎՃՈՒ ԿԱՅԱՑՈՒՄԸ

Դատարանի պատճառաբանված վճիռը սովորաբար հրապարակվում է վերջնական գրավոր դիտողությունները ներկայացնելուց մի քանի ամիս անց կամ բանավոր լսումից հետո: Մի քանի շաբաթ առաջ կողմերը տեղեկացվում են վճռի հրապարակման ամսաթվի ու ժամանակի մասին, ինչը նաև նախօրոք հրապարակվում է Դատարանի կայքէջում: Դատարանի կողմից տրամադրվող իրավաբանական օգնությունը չի ծածկում դիմողի կամ նրա ներկայացուցիչների՝ վճռի հրապարակմանը ներկա գտնվելու ծախսերը, քանի որ դա չի պահանջվում Դատարանի կողմից: Ուստի դիմողը սովորաբար վճռի հրապարակմանը ներկա չի լինում:

Մեծ պալատի վճռի եզրափակիչ մասը Դատարանի դահլիճում հրապարակվում են Մեծ պալատի Նախագահը կամ նրա կողմից լիազորված դատավորը: Պալատների վճիռները հրապարակելու համար դռնբաց նիստ հազվադեպ է անցկացվում, և դրանք անմիջականորեն ուղարկվում են կողմերին: Վճիռ կայացնելուց հետո Դատարանը հրապարակվում է մամլո հաղորդագրություն՝ վճռի հակիճ շարադրանքով, որն անմիջապես տեղադրվում է Դատարանի կայքէջում (տե՛ս ստորև 12.2-ում): Բուն վճիռը նույնպես հրապարակվում է կայքէջում՝ կայացման օրը (սովորաբար մինչև օրվա ավարտը): Դատարանի քարտուղարը վճռի հաստատված պատճենները փոստով ուղարկում է կողմերին. պատճեններն ուղարկվում են նաև Նախարարների կոմիտեին, Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարին, երրորդ կողմին կամ շահագրգիռ այլ անձանց (Կանոն 77): Վճիռները կազմվում են Դատարանի երկու պաշտոնական լեզուներից մեկով (անգլերեն կամ ֆրանսերեն), թեպետ առավել կարևոր վճիռները կայացվում են երկու լեզուներով էլ (Կանոն 76): Ինչ վերաբերում է կոնկրետ լեզվի օգտագործմանը, ապա ամենայն հավանականությամբ, դա կախված է Քարտուղարության՝ տվյալ գործով զբաղվող իրավաբանի նախապատվությունից: Վճիռները կազմվում են ստանդարտ ձևաչափով՝ Կանոն 74, 1-ին կետին համապատասխան: Բոլոր վճիռները պարունակում են հետևյալը.

- (ա) համապատասխան Պալատի կազմում Նախագահի և մյուս դատավորների անունները, և Քարտուղարի կամ Քարտուղարի տեղակալի անունը,
- (բ) վճիռը կայացնելու և հրապարակելու ամսաթվերը,
- (գ) տվյալներ կողմերի մասին,
- (դ) կողմերի ներկայացուցիչների, փաստաբանների կամ խորհրդատուների անունները,
- (ե) գործի քննության ընթացակարգը,
- (զ) գործի փաստերը,
- (է) կողմերի փաստարկների համառոտ շարադրանքը,
- (ը) իրավունքի հարցերի հիմնավորումները,
- (թ) եզրափակիչ դրույթները,
- (ժ) ծախսերի վերաբերյալ որոշումը, եթե այն կա,
- (ի) մեծամասնություն կազմած դատավորների թիվը,
- (լ) անհրաժեշտության դեպքում՝ հայտարարություն այն մասին, թե որ տեքստն է վավերական:

Դատավորները իրավունք ունեն վճռին կցել հատուկ կարծիք, որի հիմնավորումները համընկնում են կամ չեն համընկնում հիմնական վճռին, կամ պարզապես վճռի հետ համաձայն չլինելու հայտարարություն (հոդված 45, կետ 2 և Կանոն 74, կետ 2) կամ ուղղակի անհամաձայնության մասին հայտարարությունը:

Դատարանի իրավական պաշտպանության հիմնական միջոցը Կոնվենցիայով երաշխավորված մեկ կամ մի քանի իրավունքների խախտման արձանագրումն է: Եթե Դատարանը հաստատում է, որ Կոնվենցիայի խախտում եղել է, վճիռը կարող է ներառել «արդարացի փոխհատուցման» տրամադրում՝ համաձայն 41-րդ հոդվածի (մինչև 1998 թվականի նոյեմբեր՝ հոդված 50), եթե փոխհատուցման մասին հարցը պատրաստ է քննարկման համար: Փոխհատուցումը կարող է ներառել նյութական և ոչ նյութական վնասի, ինչպես նաև

դատական ծախսերի ու ծախքերի հատուցումը: Դատարանը կարող է որոշել, և սովորաբար այդպես էլ անում է, որ սահմանված ժամկետում (երեք ամսվա ընթացքում) չվճարված գումարների համար պետք է տոկոսներ հաշվվեն՝ սահմանված դրույքի համաձայն: Կոնվենցիան *չի նախատեսում* դիմողի վրա ծախսերի հատուցման պարտավորություն դնելու հնարավորություն:

Եթե 41-րդ հոդվածի հիման վրա պահանջները պատրաստ չեն լուծման համար (ինչպես, օրինակ, *Սմիթը* և *Գրեդին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործում¹), արդարացի փոխհատուցման նշանակումը կարող է հետաձգվել՝ Դատարանի կողմից լրացուցիչ փաստարկներ ստանալու համար (Կանոն 75): Այդպիսի հանգամանքներում Դատարանը հետագայում սահմանում է արդարացի փոխհատուցման պահանջի հարցը լուծելու ընթացակարգը: 41-րդ հոդվածի հիման վրա պահանջների քննության համար Դատարանի կազմի մեջ սովորաբար, թեպետ պարտադիր չէ, մտնում են նույն դատավորները (Կանոն 75, կետ 2): Եթե կողմերը հետագայում համաձայնության են ձեռք բերում 41 հոդվածի հիման վրա պահանջների վերաբերյալ, Դատարանը զանգատը հանում է գործերի ցուցակից՝ հավաստիանալով համաձայնության արդարացիության մեջ (Կանոն 75, կետ 4):

Պալատի վճիռը վերջնական չի դառնում, քանի որ այն կարող է հանձնվել Մեծ պալատի վերանայմանը (տես՝ ստորև 5.2-ում): Պալատի վճիռը վերջնական է դառնում, միայն երբ բավարարված է հետևյալ երեք պայմաններից մեկը (հոդված 44).

(ա) երբ կողմերը հայտարարում են, որ չեն պահանջելու գործի հանձնում Մեծ Պալատին, կամ

(բ) վճռի կայացումից հետո երեք ամսվա ընթացքում չի պահանջվում գործի հանձնում Մեծ Պալատին, կամ

(գ) երբ Մեծ պալատի հանձնախումբը մերժում է գործը հանձնելու պահանջը:

Մեծ պալատի վճիռը վերջնական է (հոդված 44, կետ 1): Դառնալով վերջնական՝ վճիռը ձեռք է բերում պարտադիր ուժ (հոդված 46, կետ 1):

Դատարանի վճիռներում թույլ տրված ցանկացած վրիպակ, թվաբանական կամ այլ կարգի «ակնհայտ սխալ» կարող է ուղղվել, բայց կողմերը պետք է բոլոր այդպիսի սխալների մասին Դատարանին տեղեկացնեն վճիռը կայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում (Կանոն 81):

4.2 ԳՈՐԾԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՄԵԾ ՊԱԼԱՏԻՆ

Մեծ Պալատի կողմից գործի կրկնակի վերաքննության հնարավորություն է նախատեսվել Թիվ 11 Արձանագրությամբ կատարված փոփոխությունների արդյունքում (համաձայն հոդված 43-ի և Կանոն 73-ի): Բացառիկ դեպքերում Պալատի կողմից վճիռ կայացնելուց հետո երեք ամսվա ընթացքում ցանկացած կողմ կարող է խնդրել գործը Մեծ պալատին հանձնել վերջնական վճիռ կայացնելու համար: Այն կողմը, ով Մեծ Պալատին գործը հանձնելու պահանջ է ներկայացնում, պետք է շարադրի դրա կոնկրետ պատճառները: Պահանջը քննության է առնում Մեծ պալատի հինգ դատավորից բաղկացած հանձնախումբը (Կանոն 73, կետ 2): Հանձնախմբի խնդիրն այն է, որպեսզի որոշի՝ պարունակում է արդյոք գործը ստորև նշվածներից որևէ մեկը.

ա) Կոնվենցիայի մեկնմանը վերաբերող լուրջ հարց, կամ

բ) Կոնվենցիայի կիրառմանը վերաբերող լուրջ հարց (օրինակ, եթե դա էական փոփոխություններ է պահանջում ներպետական օրենսդրությունում կամ պրակտիկայում), կամ

գ) ընդհանուր կարևորության այլ լուրջ հարց (օրինակ, էական քաղաքական հիմնախնդիր կամ քաղաքականության կարևոր հարց) (հոդված 43, կետ 2):

Հանձնախումբը պարտավոր չէ հիմնավորել պահանջի մերժումը, սակայն այն բավարարելու դեպքում Մեծ պալատը գործը լուծում է՝ վճիռ կայացնելով (հոդված 43, կետ 3):

Թիվ 11 Արձանագրությամբ վերանայման ընթացակարգ մտցնելը հանդիսանում է քաղաքական փոխզիջում Կոնվենցիայի մասնակից պետությունների միջև: Առավել «վիճելի» գործերում Կոնվենցիան այժմ պատասխանող կառավարությանը երկրորդ փորձն է ընձեռում՝ Դատարանին հանձնելու իր դիրքորոշման հիմնավորվածությունը: 43-րդ հոդվածը միայն

¹ Թիվ 33985/96 և թիվ 33986/96, 27.9.99, (2000) 29 EHRR 493. տես՝ հատկապես կ. 140-3:

ընդհանուր բնույթի պահանջներ է սահմանում գործի վերաքննության համար, որոնք, օրինակ, չեն պահանջում որպեսզի Պալատի վճռից հետո նոր փաստեր ի հայտ եկած լինեն: Մեծ պալատը կարող է գործը վերաքննության ընդունել պարզապես նրա համար, որ այն «ընդհանուր բնույթի լուրջ հարց» է արժարժուն: Կարծիք կա, որ դա խիստ վիճահարույց նորամուծություն է: Իհարկե, ճիշտ է, որ ցանկացած կողմ, այդ թվում նաև դիմողը, կարող է այդպիսի պահանջ ներկայացնել: 43-րդ հոդվածի խմբագրությունից նույնպես պարզ է, որ այդ ընթացակարգը վերաբերում է միայն «բացառիկ դեպքերին»: Ուստի ակնկալվում է, որ հինգ դատավորից բաղկացած հանձնախումբը հազվադեպ կթույլատրի գործը Մեծ Պալատին հանձնելը: Իսկապես, 2003 թվականին հանձնախումբը նիստ է գումարել է չորս անգամ՝ քննարկելու համար գործը Մեծ Պալատին հանձնելու մասին 87 պահանջ, և միայն ինը նոր գործեր են հանձնվել Մեծ պալատին՝ համաձայն 43-րդ հոդվածի²:

Երբ վերը նշված ընթացակարգի համաձայն հանձնախումբը որոշում է գործը հանձնել Մեծ Պալատին, չկա ընթացակարգ, որը թույլ կտա Դատարանին վերանայելու հանձնախմբի այդ որոշումը և դրանից հետո Մեծ պալատը պարտավոր է վերանայել գործը ու վճիռ կայացնել: Գործերը Մեծ Պալատին հանձնելուց հետո Մեծ պալատը կարող է օգտագործել Դատարանին տրված դատական լիազորությունների ամբողջ ծավալը՝ ներառյալ բարեկամական կարգավորում կնքելը (հոդված 39) կամ գործերի ցուցակից զանգատը հանելը (հոդված 37)³: Կ.-ն և Տ.-ն *ընդդեմ Ֆինլանդիայի (K and T v Finland)* գործում⁴ Դատարանից, գործը Մեծ պալատին հանձնելուց հետո, պահանջեցին պարզաբանել գործի շրջանակները, ի պատասխան Ֆինլանդիայի կառավարության այն պնդմանը, որ Դատարանը պետք է միայն կրկին քննի այն խնդիրները, որոնց առնչությամբ 8-րդ հոդվածի խախտում էր արձանագրվել: Սակայն Մեծ պալատը որոշեց, որ գործը 43-րդ հոդվածի համաձայն իրեն հանձնելուց հետո ամբողջ ծավալով ենթակա է կրկին քննության⁵: *Ռեֆահ Փարթիսի-ն (Բարեկեցություն կուսակցությունը) և այլոք ընդդեմ Թուրքիայի (Refah Partisi (the Welfare Party) and others v Turkey)* գործում⁶ Մեծ պալատը որոշեց, որ դիմողներն իրավունք ունեն ներկայացնելու փաստարկներ, կապված այն հանգամանքի հետ, որ քննարկվող միջամտությունը (քաղաքական կուսակցության լուծարումը) չի համապատասխանել ներքին օրենսդրությանը, չնայած որ դիմողները հանաձայնվել էին դրանց հետ Պալատում քննության ընթացքում, այն հիմքով, որ նրանք այդ փաստարկները ներառել էին իրենց զանգատում: Այնուամենայնիվ Դատարանը մատնանշեց, որ չի բացառում փաստարկների ներկայացման արգելքի հնարավորությունը, «եթե կողմերից որևէ մեկը ամբարեխղճություն ցուցաբերի՝ արմատապես փոխելով իր դիրքորոշումը»⁷:

4.3 ՎՃԻՒ ՄԵՎՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վճիռ հրապարակելու պահից մեկ տարվա ընթացքում յուրաքանչյուր կողմ կարող է ներկայացնել այն մեկնաբանելու մասին խնդրանք (Կանոն 79): Սովորաբար այդպիսի խնդրանքները քննարկում է վճիռը կայացրած պալատը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի կազմով նրա ձևավորումը հնարավոր չէ: Խնդրանքը կարող է մերժվել, եթե պալատը հիմքեր չի տեսնում դրա քննության համար: Հակառակ դեպքում մյուս կողմին կառաջարկվի սահմանված ժամկետներում գրավոր դիտողություններ ներկայացնել խնդրանքի վերաբերյալ: Եթե խնդրանքը բավարարվում է, Պալատը հարցը լուծում է վճիռ կայացնելով: Իրականացնելով մեկնաբանության իր իրավասությունը, Դատարանը սահմանափակվում է իր կայացրած վճռի

² 2003 թվականի Տարեկան Ձեկույցը: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի Մեծ պալատը, 2004թ. հունվար, 3րդ և 6-րդ կետեր:

³ *Պիզանոն ընդդեմ Իտալիայի (Pisano v Italy)*, թիվ 36732/97, 24.10.02, (2002) 34 EHRR 27, 26-29 կետեր:

⁴ Թիվ 25702/94, 12.7.01:

⁵ Տե՛ս նույն տեղում, կետ 140: Տե՛ս նաև *Գոչն ընդդեմ Թուրքիայի (Göç v Turkey)*, գործը թիվ 35590/97, 19.10.00, (2002) 35 EHRR 6, *Պեռնան ընդդեմ Իտալիայի (Perna v Italy)*, գործը թիվ 48898/99, 6.5.03; *Պիզանոն ընդդեմ Իտալիայի (Pisano v Italy)*, գործը թիվ 36732/97 24.10.02, (2002) 34 EHRR 27: *Աքարն ընդդեմ Թուրքիայի (Acar v Turkey)* գործով նախնական որոշման մեջ՝ թիվ 26307/95, 6.5.03, (2004) 38 EHRR 2, Մեծ Պալատը սահմանափակվել է գործը 37(2) հոդվածով ցուցակից հանելու մասին պալատի որոշման քննարկմամբ: Գանգատը գործերի ցուցակից հանելու մասին կառավարության խնդրանքը մերժվել էր, և հետագա՝ 8.4.04-ին կայացված ըստ էության որոշման մեջ Դատարանը 2-րդ հոդվածի խախտում էր արձանագրել:

⁶ Թիվ 41340/98, թիվ 41342/98, թիվ 41343/98 և թիվ 41344/98, 13.2.03, (2003) 37 EHRR 1:

⁷ Տե՛ս նույն տեղում, կետ 56:

իմաստը և շրջանակը պարզաբանելով⁸: Դատարանի կողմից արդարացի փոխհատուցման կարգով շնորհված գումարների տրամադրմանը վերաբերող մեկնաբանության խնդրանքները, իբրև «մեկնաբանության» շրջանակից դուրս գտնվող խնդիր, մերժվում են Դատարանի կողմից⁹:

4.4 ՎՃՈՒ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

Յուրաքանչյուր կողմ, այնպիսի հանգամանքի բացահայտման դեպքում, որն իր բնույթով կարող է ունենալ վճռական նշանակություն, կարող է վճռի վերանայման մասին խնդրանքով դիմել Դատարան (Կանոն 80): Վճիռների վերանայումը համարվում է «բացառիկ ընթացակարգ»¹⁰ նախևառաջ այն պատճառով, որ վիճարկում է դրանց վերջնական լինելը: Վերանայման պայմանները հետևյալն են.

(ա) ի հայտ է եկել մի հանգամանք, որն իր բնույթով կարող էր ունենալ վճռական նշանակություն, և

(բ) վճիռ կայացնելու պահին այդ հանգամանքը Դատարանին հայտնի չի եղել, և

(գ) վճիռ կայացնելու պահին այդ հանգամանքը ողջամտորեն չէր կարող հայտնի լինել վերանայման մասին խնդրանք ներկայացրած կողմին:

Վերանայման մասին խնդրանքը պետք է ներկայացվի հանգամանքը ներկայացնող կողմին հայտնի դառնալուց հետո վեց ամսվա ընթացքում: Վերանայման մասին խնդրանքում նշվում է այն վճիռը որի վերանայումը հայցվում է Վերանայման մասին խնդրանքը և այն պետք է ցույց տա որ բոլոր անհրաժեշտ պայմանները պահպանված են ներառի համապատասխան հիմնավորող փաստաթղթերը (Կանոն 80, կետ 2): Սովորաբար այդպիսի խնդրանքները քննարկում է պալատն իր սկզբնական կազմով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի կազմով դրա ձևավորումն անհնար է: Խնդրանքը կարող է մերժվել պալատի կողմից, եթե հիմքեր չկան դրա քննարկման համար: Հակառակ դեպքում մյուս կողմին առաջարկվում է որոշակի ժամկետում խնդրանքի վերաբերյալ ներկայացնել իր դիտողությունները: Եթե խնդրանքը բավարարվում է, Դատարանը հարցը լուծում է վճիռ կայացնելով:

Վերանայման ընթացակարգի օրինակ է հանդիսանում *Պարդոն ընդդեմ Ֆրանսիայի (Pardo v France)* գործը¹¹, որն առնչվում էր Դատարանի 1993 թվականին կայացրած վճռին: Դիմողը բողոքում էր տարբեր խախտումներից, այդ թվում և 6-րդ հոդվածի 1-ին մասով հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իր իրավունքը խախտելուց, և, մասնավորապես, այն բանից, որ ինքը հնարավորություն չի ունեցել մասնակցելու դատական նիստին, չնայած վճռաբեկ դատարանի նախագահի այն հայտարարությանը, որ այդ նիստը տեղի է ունենալու ավելի ուշ: 1993 թվականի իր վճռով Դատարանը 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում չէր արձանագրել, քանի որ դիմողը չէր կարողացել բավականաչափ ապացույցներ ներկայացնել ի պաշտպանություն դեպքերի իր վարկածին: Ձեռք բերելով որոշ կարևոր փաստաթղթերի պատճեններ, որոնք պահպանվել էին ներպետական դատական գործի նյութերում, դիմողը 1995 թվականին դիմել էր վճիռը վերանայելու խնդրանքով: Իր դիրքորոշումը վերանայելիս 1996 թվականին Դատարանը հաստատեց, որ փաստաթղթերն ի հայտ են բերում դիմողի կողմից շարադրված դեպքերի վարկածի ճշմարտացիությունը, և չբացառեց այն հնարավորությունը, որ իրենց բնույթով այդ փաստաթղթերը կարող էին վճռորոշ ազդեցություն ունենալ դատաքննության ընթացքի վրա: Այդ պատճառով վերանայման մասին խնդրանքը բավարարվեց հինգ ընդդեմ չորսի ձայների հարաբերակցությամբ և հանձնվեց վճիռը կայացրած պալատին: Սակայն *Պարդոնի* գործով կայացված իր վերջնական վճռում¹² Դատարանը վերանայման խնդրանքը մերժեց այն հիմքով, որ նոր փաստաթղթերը կասկածի տակ չեն դնում Դատարանի 1993 թվականի վճիռը:

⁸ Տե՛ս, օրինակ, *Ռինգայզենն ընդդեմ Ավստրիայի (Ringelsen v Austria)* գործը (թիվ 3) Շարք Ա, թիվ 16, 23.6.73, 1 EHR 513, կետ 13, *Ալլենե դը Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի (Allenet de Ribemont v France)* գործը, Շարք Ա, թիվ 308, 26.6.96, (1996) 22 EHR 582, կետ 17:

⁹ Տե՛ս, օրինակ, *Ալլենե դը Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի (Allenet de Ribemont v France)*, գործը, Շարք Ա, թիվ 308, 26.6.96, (1996) 22 EHR 582:

¹⁰ *Պարդոն ընդդեմ Ֆրանսիայի (Pardo v France)* գործը, թիվ 13416/87, 10.7.96, (1996) 22 EHR 563:

¹¹ Թիվ 13416/87, 10.7.96, (1996) 22 EHR 563: Տե՛ս նաև *Մակգինլին և Էգանն ընդդեմ Միացյալ Թագավորության (McGinley and Egan v UK)* գործը, թիվ 21825/93 և թիվ 25414/94, 28.1.00, (1999) 27 EHR 1:

¹² Թիվ 13416/87, 29.4.97:

Կանոն 80-ը *Պուպիլլոն ընդդեմ Իտալիայի (Pupillo v Italy)* գործում¹³ կիրառվեց դիմողի ժառանգորդին փոխհատուցում տրամադրելու համար՝ այն բանից հետո, երբ վճիռը կայացնելուց հետո և դրա հրապարակումից քիչ առաջ, Դատարանը տեղեկացվեց դիմողի մահվան մասին¹⁴: Սակայն ի հակադրություն դրան, *EP-ն ընդդեմ Իտալիայի (EP v Italy)* գործում¹⁵ Դատարանը բավարարեց կառավարության խնդրանքը 41-րդ հոդվածի հիման վրա արդարացի փոխհատուցման տրամադրման վերաբերյալ վճիռը վերանայելու մասին: Պալատի վճռով¹⁶ Դատարանը հաստատել էր 6-րդ հոդվածի 1-ին մասի (դատաքննության տևողությունը) և 8-րդ հոդվածի (մոր և դստեր շփման արգելքը) խախտում: Սակայն դիմողի կինը մահացավ այդ վճռի հրապարակումից ընդամենը երկու ամիս առաջ: Վճռի մեջ մտցվեցին ուղղումներ, համաձայն որոնց ոչ նյութական վնասի համար փոխհատուցում չի տրամադրվում, քանի որ Դատարանը չէր տեղեկացվել թե օրենքի հիման վրաում պետք է այն տրամադրվի: Բացի դրանից, ծախսերի ու ծախքերի փոխհատուցում չէր տրամադրվել, քանի որ դիմողի փաստաբանը Դատարանին չէր տրամադրել պահանջված տեղեկատվությունը: *Ստոյչեսկուն ընդդեմ Ռումինիայի (Stoicescu v Romania)* գործում¹⁷ Դատարանը բավարարեց նախկին վճիռը վերանայելու մասին կառավարության պահանջը և գործը հայտարարեց անընդունելի: Դիմողը շահել էր իր հորաքրոջը պատկանող գույքի ազգայնացմանը վերաբերող գործը, բայց հետագայում բացահայտվել էր, որ ներպետական դատավարության ընթացքում նա կորցրել էր ժառանգորդի կարգավիճակը:

4.5 ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

4.5.1 Պաշտպանության միջոցներ

Չափազանց կարևոր է, որ գործի քննության հենց սկզբից դիմողները հստակ պատկերացում ունենան այն մասին, թե ինչ կարող է և ինչ չի կարող անել Եվրոպական դատարանը Կոնվենցիայի խախտումների առնչությամբ պաշտպանության միջոցներ տրամադրելու շրջանակներում: Կոնվենցիայի խախտում արձանագրած Դատարանի վճռով պատասխանող պետության վրա պարտավորություն է դրվում դադարեցնել խախտումը և դրա հետևանքների համար այնպիսի հատուցում տրամադրել, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (*restitutio in integrum*): Այդ պատճառով, եթե *restitutio in integrum*-ը հնարավոր է, ապա այն պետք է իրականացնի պետությունը, քանի որ Դատարանը իշխանություն չունի վերականգնելու խախտումից առաջ առկա իրավիճակը¹⁸: Եթե *restitutio in integrum*-ը գործնականում հնարավոր չէ, ապա պատասխանող պետությունն ազատ է վճիռը կատարելու միջոցների ընտրության հարցում¹⁹, պայմանով, որ դրանք համատեղելի են Դատարանի վճռի մեջ տեղ գտած եզրակացությունների հետ²⁰:

Դատարանը պարզաբանել է իր դիրքորոշումը՝ նշելով, որ.

Վճիռը, որով Դատարանը խախտում է արձանագրում, պատասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով տրամադրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և/կամ, անհրաժեշտության դեպքում, անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ վերջ

²⁴ Թիվ 52914/1: 9-29/23/12;!

¹⁴ Տե՛ս նաև *Գերրերան և Ֆուսկոն ընդդեմ Իտալիայի (Guerrera and Fusco v Italy)* գործը, թիվ 4601 / 98, 31.7.03, *Լուցն ընդդեմ Ֆրանսիայի (Lutz v France)* գործը, թիվ 49531 / 99, 25.11.03:

¹⁵ Թիվ 31127 / 96, 3.5.01:

¹⁶ Թիվ 31127 / 96, 16.11.99:

¹⁷ Թիվ 31551 / 96, 21.9.04

¹⁸ Տե՛ս, օրինակ, *Իաթրիդիսն ընդդեմ Գունաստանի (Iatridis v Greece)*, գործը թիվ 31107 / 96, 19.10.00, (2000) 30 EHRR 97:

¹⁹ Տե՛ս, օրինակ, *Սելջուկը և Ասկերն Թուրքիայի դեմ (Seljuk ang Asker v Turkey)* գործը, թիվ 23184 / 94 և թիվ 23185 / 94, 24.4.98, (1998) 26 EHRR 477, կետ 125:

²⁰ Տե՛ս, օրինակ, *Սկոցարի և Զունտան ընդդեմ Իտալիայի (Scozzari and Giunta v Italy)* գործը, թիվ 39221 / 98 և թիվ 41963 / 98, 13.7.00, (2002) 35 EHRR 12:

տալու համար Դատարանի արձանագրած խախտումները և հնարավորինս շտկելու դրա հետևանքները²¹:

Արդարացի փոխհատուցման կապակցությամբ ևս Դատարանը նշել է, որ.

Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիման վրա արդարացի փոխհատուցման կարգով գումարների տրամադրման նպատակը բացառապես կրած վնասի համար հատուցում տալն է այնքանով, որքանով որ այդ վնասը հետևանք է խախտման, որն այլ կերպ վերականգնվել չի կարող²²:

Այդ իսկ պատճառով Եվրոպական դատարանի որոշումները «իրենց բնույթով դեկլարատիվ են»²³: Այն գործում, որով դիմողը հասնում է Կոնվենցիայի խախտման ճանաչմանը, Դատարանը հրապարակում է Կոնվենցիայի խախտում, ինչպես նաև կարող է վնասի ու ծախսերի փոխհատուցում տրամադրել: Սակայն նա չի վերացնում ներպետական մարմինների կամ դատարանների որոշումները (այդ թվում դատավճիռները)²⁴, ուժը կորցրած չի ճանաչում ներքին օրենսդրությունը և չի պահանջում, որպեսզի պետությունը փոխի իր օրենսդրությունը²⁵ կամ ձեռնարկի որևէ կոնկրետ միջոց ազգային իրավական համակարգի շրջանակներում (ինչպես օրինակ՝ բանտարկյալներին Կոնվենցիայի անդամ այլ պետության իրավագործությանը հանձնելը²⁶ կամ տուգանքներ վճարելու մասին հրաման տալը): Սա այն փաստի արտացոլումն է, որ Եվրոպական դատարանը վճիռ է կայացնում միջազգային իրավունքի խախտումների վերաբերյալ:

Բայցևայնպես, Դատարանը կարող է առավել ընդհանուր բնույթի հղումներ անել այն պարտավորությունների վերաբերյալ, որոնք, նրա կարծիքով, բխում են Կոնվենցիայից և իր նախադեպից: Օրինակ, *Սկոցարին եւ Ջունտան ընդդեմ Իտալիայի (Scozzari and Giunta v Italy)* գործում²⁷, որը վերաբերում էր ծնողների կողմից երեխաներին տեսակցելուն, Դատարանը նշել է, որ « իշխանության համապատասխան մարմինները, տվյալ դեպքում անչափահասների գործերով դատարանը, պարտավոր են մշտապես դրսևորել զգոնություն, մասնավորապես սոցիալական ծառայությունների գործողությունների նկատմամբ՝ ապահովելու համար, որ վերջիններիս գործողությունները չխախտեն իշխանությունների որոշումները»²⁸: *Գյորգուլուն ընդդեմ Գերմանիայի (Görgülü v Germany)* գործում²⁹ որը վերաբերում էր պետության կողմից դիմողին իր որդու հետ տեսակցության և նրա խնամակալության իրավունքը մերժելուն՝ ինչը դատարանի կարծիքով հանգեցրել էր դիմողի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտմանը, Դատարանը նշել է, որ համաձայն 46-րդ հոդվածի պետության պարտավորությունը ենթադրում է «դիմողին գոնե հնարավորություն տալ տեսակցվելու իր երեխայի հետ»:

Ավելին՝ այն դեպքում երբ Կոնվենցիայի մասնակից պետությունը պատշաճ միջոցներ չի ձեռնարկում փոփոխելու այն օրենսդրությունը, որը ճանաչվել է Կոնվենցիային հակասող, Դատարանը հակված է մեկնաբանել այդ փաստը նույն հարցի վերաբերյալ իր հետագա վճիռներում: Օրինակ՝ *Մեսսինան ընդդեմ Իտալիայի (№2) (Messina v Italy (№2))* գործում, որը վերաբերում էր բանտարկյալների նամակագրության վերահսկմանը (ինչը, նախկինում արդեն ճանաչվել էր որպես 8-րդ հոդվածի խախտում), Դատարանը նշել է.

Դատարանն արդեն հաստատել է, որ 18-րդ բաժինը, որը չի կանոնակարգում ո՛չ բանտարկյալների նամակագրության վերահսկման միջոցների օրինականությունը, ո՛չ էլ այդ

²¹ *Սկոցարին և Ջունտան ընդդեմ Իտալիայի (Scozzari and Giunta v Italy)* գործը, թիվ 39221 / 98 և թիվ 41963 / 98, 13.7.00, (2002) 35 EHRR 12, կետ 249:

²² Տե՛ս նույն տեղում, կետ 250:

²³ Տե՛ս, օրինակ, *Ասանիձեն ընդդեմ Վրաստանի (Assanidze v Georgia)* գործը, թիվ 71503 / 01, 8.4.04, կետ 202:

²⁴ Տե՛ս, օրինակ, *Շմաուցերն ընդդեմ Ավստրիայի (Schmautzer v Austria)* գործը, թիվ 15523 / 89, Շարք Ա, թիվ 328-Ա, 23.10.95, (1996) 21 EHRR 511, 42-44 կետեր, *Լայոնզը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Lyons and others v UK)* գործը, թիվ 15227 / 03, որոշում 8.7.03:

²⁵ Տե՛ս, օրինակ, *Լունդեվալն ընդդեմ Շվեդիայի (Lundevall v Sweden)* գործը, թիվ 38629 / 97, 12.11.02, կետ 44:

²⁶ Թիվ 39221 / 98 և թիվ 41963 / 98, 13.7.00, (2002) 35 EHRR 12:

²⁷ *Սկոցարին և Ջունտան ընդդեմ Իտալիայի (Scozzari and Giunta v Italy)* գործը, թիվ 39221/98 և 41963/98, 13.7.00, (2002) 35 EHRR 12:

²⁸ Նույն տեղում, կետ 181:

²⁹ Թիվ 74969 / 01, 26.2.04, կ. 64:

միջոցները արդարացնող հիմքերը, բավարար հստակությամբ չի մատնանշում համապատասխան ոլորտում իշխանություններին տրվող՝ հայեցողության շրջանակներն ու միջոցները (տես՝ Կալոջերո Դիանան ընդդեմ Իտալիայի գործով 1996թ. նոյեմբերի 15-ի վճիռը, 15, Ձեկույցներ. 1996-V, c. 1775-76, կետեր 29-33, և Դոմենիկինին ընդդեմ Իտալիայի գործով 1996թ. նոյեմբերի 15-ի վճիռը, 15, Ձեկույցներ. 1996-V, c. 1799-800, կետեր 29-33):

... Դատարանն ընդգծում է, որ մինչեւ օրս ոչ կառավարության հիշատակած՝ Բանտային վարչարարության մասին Ակտի 35-րդ բաժնի փոփոխությունը, ... ոչ էլ արդարադատության նախարարի կողմից 1999թ. հուլիսի 23-ին սենատ ներկայացված օրինագիծը, որի նպատակն էր գործող օրենքը համապատասխանեցնել Կալոջերո Դիանայի եւ Դոմենիկինիի գործով Դատարանի կայացրած վճիռներին, ... ամենայն հավանականությամբ չէին ընդունվել: Ավելին՝ Դատարանի քննության են սպասում ևս մի քանի գործեր, որոնք նույնպես վերաբերում են բանտարկյալների նամակագրության վերահսկմանը³⁰:

Նման մեկնաբանությունները ցույց են տալիս, թե ինչպիսի հսկայական բեռ են հանդիսանում Դատարանի համար «կլոն» գործերը (այսինքն՝ նմանատիպ կրկնվող խախտումները), ինչպես նաև ցույց են տալիս Դատարանի շտապեցնող վերաբերմունքը այն պետությունների նկատմամբ, որոնք չեն բարեփոխում Կոնվենցիան խախտող օրենքները³¹: 2004թ.-ին ընդունված բանաձևում Նախարարների կոմիտեն Դատարանին կոչ արեց ձեռնարկել հետագա քայլեր՝ խախտումների հիմքում ընկած խնդիրները բացահայտելու գործում պետություններին օժանդակելու ուղղությամբ: Բանաձևը Դատարանին կոչ է անում.

Կոնվենցիայի խախտումները հաստատող վճիռներում, հնարավորինս բացահայտել այն, ինչը Դատարանը համարում է խախտումների հիմքում ընկած սխտեմատիկ հիմնախնդիր, և այդ հիմնախնդրի պատճառը՝ մասնավորապես, այն դեպքում, երբ դրանց հետևանքով բազմաթիվ գանգատներ կարող են ներկայացվել, որպեսզի պետություններին օժանդակի համապատասխան լուծում գտնելու հարցում, իսկ Նախարարների կոմիտեին՝ վճիռների կատարման վերահսկողությունն իրականացնելու գործում...³²:

Այս կապակցությամբ Նախարարների կոմիտեն նաև պետություններին կոչ է արել վերազնահատել ներպետական իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունը և, մասնավորապես՝ «Դատարանի վճիռներից հետո վերանայել ներպետական օրենսդրությունում կամ պրակտիկայում մատնանշված կառուցվածքային կամ ընդհանուր բնույթի թերությունները, ներպետական իրավական պաշտպանության առկա միջոցների արդյունավետությունը և խուսափելու համար Դատարանին կրկնվող գործեր ներկայացնելուց այն դեպքում, երբ անհրաժեշտություն կա, ստեղծել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ»³³:

Բացի դրանից, ձգտելով կատարելագործել որոշումների կատարման վերահսկողության իր ընթացակարգը, Նախարարների կոմիտեն փոխնախարարներին կոչ է արել. «կոնկրետ ու արդյունավետ միջոցներ ձեռնարկել առաջին հերթին Դատարանի այն վճիռների կատարումը բարելավելու և արագացնելու ուղղությամբ որոնք բացահայտում են խախտման հիմքում ընկած համակարգային խնդիրներ»³⁴:

Առաջին վճիռը, որում Դատարանը անդրադարձել է Նախարարների կոմիտեի այս բանաձևին ու հանձնարարականին, եղել է *Բրոնյովսկին ընդդեմ Լեհաստանի (Broniowski v Poland)*

³⁰ Թիվ 25498 / 94, 28.8.00, 81-82 կետեր:

³¹ Համաձայն Կոնվենցիայի Արձանագրություն 14-ի, կոմիտեն կարող է գործը ընդունելի հայտարարել և միևնույն ժամանակ ըստ էության որոշում կայացնել, եթե գործում Կոնվենցիայի մեկնաբանությանն ու կիրարկմանը վերաբերող հիմնական հարցը հաստատված դատական պրակտիկայի առարկա է հանդիսանում (Արձանագրություն 14-ի հոդվ. 8, որը փոփոխություններ է մտցնում Կոնվենցիայի 28 հոդվածում):

³² Նախարարների կոմիտեի (2004)3 Հանձնարարականը հիմնական համակարգային խնդիր վերահանող վճիռների մասին, 12 մայիսի 2004թ.:

³³ Նախարարների կոմիտեի 2004թ. մայիսի 12-ի՝ ներպետական իրավական պաշտպանության միջոցների կատարելագործման մասին Res (2004)6 Հանձնարարականը մասնակից պետություններին: Տես՝ նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում ամրագրված չափորոշիչների հետ օրինագծերի, գործող օրենքների և վարչական պրակտիկայի համատեղելիությունը ստուգելու մասին Նախարարների կոմիտեի Res (2004)5 Հանձնարարականը մասնակից պետություններին, 12 մայիսի 2004թ.:

³⁴ Նախարարների կոմիտեի 2004թ. մայիսի 12-ի՝ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կիրարկման արդյունավետության ապահովումը ազգային եւ եվրոպական մակարդակում» Հռչակագիրը:

գործով³⁵ կայացված վճիռը, որտեղ Մեծ պալատը գտել է Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Գործը վերաբերում էր երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Լեհաստան հայրենադարձված դիմողին՝ իր և իր ընտանիքի կորցրած գույքի (որն այժմ գտնվում է Լվովում՝ Ուկրաինա) համար փոխհատուցում չվճարելուն: Դատարանը նշել է, որ «իր վճիռը ենթադրում է, որ դիմողի Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքի խախտումը պատճառ է մի տարածված հիմնախնդրի, որը առաջացել է Լեհաստանի օրենսդրության և վարչարարության բացթողումներից, որոնց հետևանքով տուժել են և ներկայումս էլ կարող են տուժել մեծ թվով անձիք»³⁶: Դատարանն ընդունել է, որ այդ համակարգային հիմնախնդիրը ազդեցություն է ունեցել 80 հազար մարդու վրա³⁷, և դրա հետ կապված 167 գանգատ գտնվում էր իր վարույթում: Այդ առումով Դատարանը նշեց, որ. «դա ոչ միայն Կոնվենցիայի իմաստով պետության պատասխանատվությունը ծանրացնող գործոն է, կապված գոյություն ունեցող կամ անցյալում տեղ գտած իրավիճակի հետ, այլև սպառնալիք է ներկայացնում Կոնվենցիայի համակարգի հետագա արդյունավետ գործունեության համար»³⁸: Այսպես՝ Դատարանը գտավ, որ ներպետական մակարդակում կա ընդհանուր միջոցների կիրառման անհրաժեշտություն՝ համակարգային խնդիրները շտկելու և անհատների իրավունքների պաշտպանությունը ապահովելու համար: Դատարանը հետագայում որոշեց հետաձգել իր վարույթում գտնվող և նույն հարցերին վերաբերող բոլոր այն գանգատների քննությունը, որ կարող են ներկայացվել ապագայում, այնքան ժամանակ, քանի դեռ ներպետական մակարդակում միջոցներ չեն ձեռք առնվի *Բրոնյովսկիի* գործով վճռի կատարման ուղղությամբ³⁹:

Դատարանը նաև քայլեր է ձեռնարկել՝ ընդգծելու համար վարույթի երկարատևությանը վերաբերող հիմնախնդիրը Իտալիայից ներկայացվող գործերի առնչությամբ: Դատարանը հաստատել է, որ Իտալիայից ներկայացվող գործերում քննության ողջամիտ ժամկետի մասին պահանջի բազմաթիվ խախտումները հանգեցրել են Կոնվենցիայի հետ անհամատեղելի պրակտիկայի, և այդ գործերի քանակը ծանրացնող հանգամանք է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտումները հաստատելու համար⁴⁰: Դա հանգեցրեց այդօրինակ գործերի շատ ավելի պարզեցված ընթացակարգով քննությանը, թեպետ այս հանգամանքն քննադատության ենթարկվեց դատավոր Ֆարրերի Բրավոյի կողմից⁴¹: Չնայած որ այս հանգամանքը պարզորոշ կերպով ցույց է տալիս, թե որքան լուրջ է Դատարանը վերաբերվում տվյալ հարցին, սակայն ակնհայտ է, որ Դատարանի դիրքորոշումը չանդրադարձավ, օրինակ, վնասի փոխհատուցման գումարների չափի ավելացմանը: Դիտարկելով Դատարանի համակարգի հնարավոր բարեփոխումները, կառավարությունների պատվիրակները խուսափեցին անել այնպիսի առաջարկություններ որոնց համաձայն «համառող» պետությունները պետք է տույժի ենթարկվեն կրկնվող խախտումների համար: Սակայն այժմ Արձանագրություն Թիվ 14-ում ներառվել է առաջարկություն (տես՝ ստորել), համաձայն որի Նախարարների կոմիտեին կարող է Դատարանին հանձնել այն գործերը, որոնց կապակցությամբ ընդունված վերջնական վճիռները պետությունը հրաժարվում է կատարել:

Բացառիկ դեպքերում, Դատարանը կարող է ավելի հեռուն գնալ, քան պարզապես խախտում արձանագրելն է և փոխհատուցում տրամադրելը: Ստորև քննության առնված երկու ոլորտներում (*ռեստիտուցիան սեփականությանը վերաբերող գործերում և ապօրինի ձերբակալված անձանց ազատ արձակելուն*) Դատարանը հակված էր պետությանը կարգադրագրել տուժողին փոխհատուցում տրամադրելուց բացի այլ միջոցներ կիրառել: Ստորև քննության առնվող ևս երկու ոլորտներում (*քրեական հետաքննությունը և քրեական*

³⁵ № 31443/96, 22.6.04:

³⁶ Նույն տեղում, կ.189:

³⁷ Այն մարզի առնչությամբ, որը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Բուզ գետի երկայնքով Լեհաստանի արևելյան սահմանի հաստատումից հետո հայտնի է որպես «անդրբուզյան տարածք»:

³⁸ Տե՛ս նույն տեղում, կետ 193:

³⁹ Տե՛ս, Եվրոպական դատարանի 2004 թվականի օգոստոսի 31-ի՝ «Բուզ գետի վերաբերյալ գործերը հետաձգվեցին» մամուլ հաղորդագրությունը:

⁴⁰ *Բոտտազի*ն ընդդեմ *Իտալիայի (Bottazzi v Italy)*, թիվ 34884/97, 28.7.99, կետ 22 (Մեծ Պալատը հղում է արել Եվրոպական հանձնաժողովի ավելի քան 1400 հաղորդագրությունների վրա, որոնց հետևանքը Նախարարների կոմիտեի բանաձևն էր, որն ընդունեց, որ Իտալիան նույն պատճառով խախտում է 6(1) հոդվածը): Տե՛ս՝ նաև, օրինակ, *Մեննիտո*ն ընդդեմ *Իտալիայի (Mennitto v Italy)*, թիվ 33804/96, 5.10.00, (2002) 34 EHR 48:

⁴¹ Տե՛ս, օրինակ, *Գերրերան* ընդդեմ *Իտալիայի (Gerrera v Italy)*, թիվ 44413/98, 28.2.02 (իր հատուկ կարծիքում դատավոր Ֆերրարի Բրավոն մեկնաբանում է այն փաստը, որ մեկ օրում կայացվել է համանման 133 որոշում):

վարույթները վերաբացումը) Դատարանը ցույց տվեց իր պատրաստակամությունը՝ ներկայացնելու առաջարկություններ կապված պետության կողմից ձեռնարկվելիք իրավական պաշտպանության միջոցների հետ, սակայն ավելի առաջ չգնաց և պետությունից չպահանջեց կոնկրետ քայլեր ձեռնարկել:

4.5.2 Ռեստիտուցիա սեփականության վերաբերյալ գործերում

Սեփականության վերաբերյալ գործերում ռեստիտուցիայի կապակցությամբ Դատարանը հաստատեց իր հակվածությունը զուտ խախտում արձանագրելու սահմաններից դուրս գալու առումով: Սեփականության ազգայնացմանը վերաբերող մի շարք գործերում, որտեղ դիմողները հաջողության էին հասել Կոնվենցիայի Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտումները վիճարկելու առումով, Դատարանը պետությունից պահանջեց վերադարձնել գույքը, հակառակ դեպքում նա պարտավոր էր փոխհատուցում վճարել դիմողին⁴²: Այս հարցը առավել հանգամանորեն քննարկվում է ստորև Գլուխ 9-ում:

4.5.3 Ապօրինաբար ձերբակալված անձի ազատումը

Ասսանիձեն ընդդեմ Վրաստանի գործով⁴³ դիմողը Վրաստանի Աջարիայի ինքնավար մարզում երեք տարի շարունակ կալանքի տակ էր գտնվում այն բանից հետո, երբ Վրաստանի Գերագույն դատարանը արդարացրել էր նրան և վճիռ կայացրել նրա ազատ արձակելու մասին: Վրաստանի կառավարությունը ինչպես իրավական, այնպես էլ քաղաքական միջոցներ էր ձեռնարկել նրա ազատումն ապահովելու համար, բայց ապարդյուն: Մեծ պալատը վճռեց, որ դիմողի կալանքի տակ շարունակաբար պահելը կամայական է ու խախտում է ինչպես 5-րդ հոդվածի 1-ին մասը, այնպես էլ 6-րդ հոդվածի 1-ին մասը: Նկատի ունենալով այդ դեպքի բացառիկությունն ու անհետաձգելիությունը, Դատարանը պատասխանող պետությունից պահանջեց «դիմողի ազատ արձակումն ապահովել հնարավորինս արագ»: Այդպիսի աննախադեպ քայլի Դատարանի հիմնավորումը բավականաչափ լակոնիկ էր. «տվյալ գործում խախտումն իր բնույթով միջոցների որևէ այլ իրատեսական ընտրություն չի թողնում, որոնք պահանջվում են այդ խախտումը շտկելու համար»: Մեծ պալատի կողմից համանման վճիռ էր ընդունվել *Իլիաշկուն և այլոք ընդդեմ Ռուսաստանի և Մոլդովայի (Ilascu and others v Russia and Moldova)* գործով⁴⁴, որում Դատարանը որոշեց, *inter alia*, որ դիմողներն ապօրինաբար կալանքի տակ պահվել և շարունակում են պահվել «Մերձդնեստրյան մոլդովական հանրապետությունում»՝ Մոլդովայի շրջաններից մեկում, որը 1991 թվականին հռչակել էր իր անկախությունը, սակայն չէր ճանաչվել միջազգային հանրության կողմից: Նրանք դատապարտվել էին «Մլոդովայի Մերձդնեստրյան Հանրապետության Գերագույն դատարանի կողմից», որը հիմնադրվել էր մի կազմավորման կողմից, ինչը միջազգային իրավունքի տեսանկյունից անօրինական է: Դատարանը հետևյալ հիմնավորումն է տվել.

Դատարանը ... համարում է, որ երեք դիմողներին կալանքի տակ ապօրինաբար և կամայականորեն շարունակաբար պահելն անպայմանորեն հանգեցնում է Դատարանի կողմից արձանագրված 5-րդ հոդվածի խախտման փաստի երկարաձգման, և Դատարանի վճիռները կատարելու պատասխանող պետությունների՝ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պարտավորության խախտման ...:

Այն հիմքերի հաշվառմամբ, որոնցից ելնելով Դատարանը Կոնվենցիայի խախտում էր արձանագրել ... պատասխանող պետությունները պետք է վերջ տան դիմողներին կալանքի տակ կամայականորեն պահելուն և ապահովել նրանց անհապաղ ազատումը:

4.5.4 Քրեական հետաքննություն

⁴² Տե՛ս, օրինակ, *Պապամիխալուրուսը և մյուսները ընդդեմ Հունաստանի (Papamichaloroulos and others v Greece)*, թիվ 14556/89, Շարք Ա, թիվ 330-Բ, 31.10.01, (2001) 33 EHRR 439, *Բրումեսու ընդդեմ Ռումինիայի (Brumăesu v Romania)* գործը, թիվ 28342/95, 23.1.01, (2001) 33 EHRR 35:

⁴³ Թիվ 71503/01, 8.4.04:

⁴⁴ Թիվ 48787/99, 8.7.04:

Մի շարք գործերում, որոնցով դիմողները պնդում էին, որ իշխանությունները խախտել են Եվրոպական կոնվենցիայով սահմանված իրենց պարտավորությունները՝ չանցկացնելով հանցագործությունների պատշաճ կամ արդյունավետ հետաքննություն, դիմողները Դատարանից խնդրել են պատասխանող պետությանը պարտավորեցնել կատարելու այդպիսի հետաքննություն: Նմանօրինակ խնդրանքը միանգամայն ողջամիտ է թվում, սակայն Դատարանը մինչ այժմ հրաժարվել է պարտավորեցնել որևէ պետության դա անել՝ գերադասելով որոշումների կատարման համար պահանջվող գործնական միջոցների հետ կապված հարցերի լուծումը թողնել Նախարարների կոմիտեի հայեցողությանը: *Ֆինուքեյնս ընդդեմ Միացյալ Թագավորության (Finukane v UK)* գործում⁴⁵ Դատարանը 2-րդ հոդվածի խախտումն արձանագրեց հյուսիսիռլանդացի փաստաբան Պատրիկ Ֆինուքեյնի սպանության առնչությամբ իրականացված հետաքննությունում տեղ գտած բազմաթիվ թերությունների հիմքով: Դատարանը հրաժարվեց մահվան հանգամանքների վերաբերյալ նոր հետաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնել Միացյալ Թագավորության կառավարությանը՝ այն հիմնավորմամբ, որ «տվյալ գործում դա տեղին չէ»: այս ձևակերպումը ենթադրում է, որ այն դեպքերում երբ դա «տեղին» է, նման հնարավորություն գոյություն ունի: Դատարանի հիմնավորումները հետևյալներն էին.

Նմանօրինակ գործերում չի կարելի ենթադրել, որ իրականացվելիք հետաքննությունը կարող է արդյունավետ լինել զոհի ընտանիքի իրավունքները վերականգնելու կամ էլ թափանցիկության և լայն հասարակությանը հաշվետու լինելու պահանջները բավարարելու առումով: Ապացույցների և վկաների մատչելիության վրա անցած ժամանակի ազդեցությունը անխուսափելիորեն կհանգեցնեն նրան, որ հետաքննությունը կլինի անբավարար և անավարտ մի գործընթաց, ինչը չի կարող բացահայտել կարևոր փաստերը կամ փարատել բոլոր կասկածներն ու տարակուսանքները⁴⁶:

Դատարանը մերժեց նմանօրինակ պահանջները նաև «անհետացման» մասին գործերում⁴⁷: Սակայն, այդպիսի դիրքորոշումը, կարծես, հակասում է *Աչարն ընդդեմ Թուրքիայի (Acar v Turkey)* գործում⁴⁸ Դատարանի արտահայտած դիրքորոշմանը, որտեղ Մեծ պալատը, ըստ էության, «վերացրել է» Թուրքիայի կառավարության միակողմանի հայտարարության հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին պալատի վճիռը: Մեծ պալատը հիմնավորեց, որ.

... անհետացած կամ ինքնությունը չպարզված հանցագործների կողմից սպանված անձանց վերաբերող այն գործերում, որոնց նյութերում առկա prima facie ապացույցները հաստատում են մեղադրանքներն առ այն, որ ներպետական հետաքննությունը չի բավարարել կոնվենցիայով սահմանած չափանիշներին, միակողմանի հայտարարությունը պետք է պարունակի առնվազն այդ փաստի ճանաչումը՝ զուգակցված Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո պատասխանող պետության կողմից հետաքննություն իրականացնելու պարտավորությանը՝ կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ մասով վերջինիս պարտավորությունների համատեքստում, որը լիովին կհամապատասխաներ կոնվենցիայի պահանջներին, ինչպես նախորդ համանման գործերում վճռվել էր Դատարանի կողմից⁴⁹:

4.5.5 Քրեական գործերի վերաբացելը

Չնայած, Դատարանը, մինչ այժմ չի պահանջել ներպետական մակարդակում գործերի վերաբացում այն բանից հետո, երբ այդ վարույթների ընթացքում կոնվենցիայի խախտում է արձանագրել⁵⁰, սակայն վարույթների վերաբացման ուղղությամբ պետությունների վրա

⁴⁵ Թիվ 29178/95, 1.7.03, (2003) 37 EHRR 29:

⁴⁶ Նույն տեղում, կետ 89:

⁴⁷ Տե՛ս, օրինակ, *Օրհանն ընդդեմ Թուրքիայի (Orhan v Turkey)* գործը, թիվ 25656/94, 18.6.02:

⁴⁸ Թիվ 26307/95, 6.5.03, (2004) 38 EHRR 2:

⁴⁹ Տե՛ս, նույն տեղում, կետ 84:

⁵⁰ Տե՛ս, օրինակ, *Ֆիշերն ընդդեմ Ավստրիայի (Fischer v Austria)*, թիվ 27569/02, որոշում 6.5.03 (Արձանագրություն 7-ի 4 հոդվածի խախտումը հաստատելուց հետո), *Լայոնզն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Lyons and others v UK)* գործը, թիվ 15227/03, որոշում 8.7.03 (6-րդ հոդվածի խախտումը հաստատելուց հետո):

հարաճուն ճնշում է գործադրվում: Նախարարների կոմիտեն ընդունել է, որ որոշ գործերով ներպետական իշխանությունների կողմից իրականացվող կրկնակի քննությունը կամ դատաքննության վերաբացումը «*restitutio in integrum*»-ին հասնելու առավել արդյունավետ միջոց են հանդիսանում: Նախարարների կոմիտեի 2000 թվականի Հանձնարարականը⁵¹ Կոնվենցիայի անդամ պետություններին կոչ է անում գործերի վերաբացման կամ վերաքննության հնարավորություն ապահովել այն դեպքերում, երբ Եվրոպական դատարանը Կոնվենցիայի խախտում է արձանագրել: Արդյունքում, Կոնվենցիայի անդամ շատ երկրներ այժմ միջոցներ են ձեռնարկել, որոնց շնորհիվ ներպետական վարույթները կարող է վերաբացվել՝ Եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի խախտումներ արձանագրելուց հետո⁵²:

Դատարանը նույնպես դա ընդգծել է իր վերջին մի շարք վճիռներում: Թուրքիայի դեմ բերված մի շարք գործերով վճիռներում, որոնք հրապարակվել էին 2003 թվականի հոկտեմբերին, դիմողները դատապարտվել էին դատարանի կողմից, որը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով անկախ ու անաչառ չէր: Դատարանը նպատակ է ունեցել ընդգծելու, որ այդպիսի հանգամանքներում իրավական պաշտպանության առավել ընդունելի ձևը սկզբունքորեն կլիներ այն, որ նրանց գործերը հնարավորինս արագ կրկին քննվեին անկախ ու անաչառ դատարանի կողմից⁵³: Քրեական վարույթի վերաբացելու կամ դիմողի գործով վերաքննություն իրականացնելու վերաբերյալ համանման հանձնարարական էր տրվել *Սոմոգիին ընդդեմ Իտալիայի (Somogyi v Italy)* գործում⁵⁴, դիմողի՝ իր գործի քննությանը մասնակցելու իրավունքի հնարավոր խախտման փաստի արձանագրումից հետո: Կարծիք կա, որ նմանօրինակ հանձնարարականները պետք է տրվեին այն բոլոր դեպքերում, որտեղ քրեական վարույթների ընթացքում 6-րդ հոդվածի խախտում է տեղ գտել, որը և հանգեցրել է վիճելի դատապարտման: Սակայն քիչ հավանական է, որ Դատարանը նման հանձնարարականներ կտա քաղաքացիական գործերի վերաբացման առումով, այն բարդությունների պատճառով, որոնք կարող են առաջանալ դատաքննության մյուս (ոչ պետական) կողմի համար:

4.5.6 Վճիռների կատարման վերահսկողությունը. Նախարարների կոմիտեի դերը

Վճիռները փոխանցվում են Նախարարների կոմիտեին, որը վերահսկում է դրանց կատարումը (հոդված 46, 2-րդ կետ): Գործնականում, պատասխանող պետությունը Դատարանի վճռի կատարման կապակցությամբ իրականացված յուրաքանչյուր միջոցի մասին հաղորդում է Նախարարների կոմիտեին: Առաջին հերթին՝ Նախարարների կոմիտեն հետևում է Դատարանի սահմանած արդարացի փոխհատուցման վճարմանը, և հոգուտ դիմողի ցանկացած այլ կոնկրետ միջոցառումների («անհատական միջոցառումներ») իրականացմանը՝ ներառյալ, օրինակ, ցանկացած շարունակվող անօրինական իրավիճակի վերացումը: Երկրորդ՝ Նախարարների կոմիտեն ապահովում է առավել ընդհանուր բնույթի միջոցառումների իրականացումը, որոնք կոչված են կանխելու նմանօրինակ խախտումներն ապագայում

⁵¹ Թիվ R (2000)2, 19.1.00 (տես՝ Հավելված 19): Տե՛ս, օրինակ, դատավոր Ռեսսի զուգահեյսող կարծիքը *Սիգուրդսոնն ընդդեմ Իսլանդիայի (Sigurdson v Iceland)* գործում, թիվ 39731 / 98, 10.4.03, որը փաստարկում է Գերագույն Դատարանի առջև ազգային դատաքննության վերսկսման անհրաժեշտությունը այդ քննության ընթացքում անաչառությունից ու անկողմնակալությունից հիմնավորված զանգատի պատճառով 6(1) հոդվածի խախտումը Եվրոպական դատարանի կողմից ճանաչելուց հետո:

⁵² Տե՛ս՝ Նախարարների կոմիտեի թիվ R (2002)2, Բացատրական զեկույցը, կետ 3:

⁵³ Տե՛ս, օրինակ, Ակկասն ընդդեմ Թուրքիայի (*Akkaş v Turkey*) գործը, թիվ 52665/99, Գակարն ընդդեմ Թուրքիայի (*Gakar v Turkey*) գործը, թիվ 42741/98, Գավուսը և Բուլուսն ընդդեմ Թուրքիայի (*Gavuş and Bulut v Turkey*) գործը, թիվ 41580/98 և թիվ 42439/98, Դալգիշն ընդդեմ Թուրքիայի (*Dalgıç v Turkey*) գործը, թիվ 51416/99, Էրենն ընդդեմ Թուրքիայի (*Eren v Turkey*) գործը, թիվ 46106/99, Էրգյուլը և Էնգինն ընդդեմ Թուրքիայի (*Ergül and Engin v Turkey*) գործը, թիվ 52744/99, Գենջելն ընդդեմ Թուրքիայի (*Gengel v Turkey*) գործը, թիվ 534431/99, Հայրեթին Բարբարոս Յիլմազն ընդդեմ Թուրքիայի (*Hayrettin Barbaros Yılmaz v Turkey*) գործը, թիվ 50743/99, Մետուտ Էրդողանն ընդդեմ Թուրքիայի (*Mesut Erdoğan v Turkey*) գործը, թիվ 53895/00; Օզյուլն ընդդեմ Թուրքիայի (*Ozyol v Turkey*) գործը, թիվ 48617/99, Փեքերն ընդդեմ Թուրքիայի (*Peker v Turkey*) գործը, թիվ 53014/99, Սիմսերն ընդդեմ Թուրքիայի (*Şimsər v Turkey*) գործը, թիվ 50118/99, Սյուվանողուլարին և այլոք ընդդեմ Թուրքիայի (*Süvarioğulları and others v Turkey*) գործը, թիվ 50119/99 և Թուրքմազը և այլոք ընդդեմ Թուրքիայի (*Tutmaz and others v Turkey*) գործը, թիվ 51053/99, բոլորը՝ 23.10.03:

⁵⁴ Թիվ 67972/01, 18.5.04:

(«ընդհանուր միջոցառումներ»): Սրանք կարող են ներառել, օրինակ, օրենսդրության, վարչական պրակտիկայի կամ պետական քաղաքականության փոփոխությունները⁵⁵:

Կոմիտեի վերահսկողության ներքո գտնվող վճիռների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունը կարելի է գտնել Կոմիտեի կայքէջում (<https://wcm.coe.int/rti/cm/index.jsp>): Ներկայումս որոնումը պետք է կատարել ըստ նիստերի, սակայն մշակվում է որոնման ավելի կատարելագործված համակարգ:

«Անհատական միջոցառումներ» են հանդիսանում.

- ներպետական վարույթների վերաբացումը⁵⁶,
- դատական արգելանքի վերացումը⁵⁷,
- արդարացնող դատավճռի կայացումը⁵⁸,
- դատվածությունը հանելը⁵⁹,
- կալանքից ազատ արձակելը⁶⁰,
- արտաքսման մասին որոշման վերացումը⁶¹:

Կիրառվել են հետևյալ «ընդհանուր միջոցառումները».

- նոր օրենսդրության ընդունումը⁶²,
- [Դատարանի] վճռից բխող ներպետական դատարանների պրակտիկայի փոփոխությունները⁶³,
- այն երկրներում, որտեղ Սարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան և Եվրոպական դատարանի վճիռներն գործում են անմիջականորեն (համապատասխան դատական մարմինների սահմանադրական լիազորությունների շրջանակներում), վճռի հրապարակումը և տարածումը սովորաբար բավական են լինում՝ Նախարարների կոմիտեին ցույց տալու համար, որ դատական պրակտիկայում անհրաժեշտ փոփոխությունները կկատարվեն⁶⁴,
- իշխանության համապատասխան մարմինների համար հրահանգների ընդունումը⁶⁵,
- ուսուցման և/կամ գործնական պարապմունքների ծրագրեր պետական ծառայողների համար⁶⁶:

⁵⁵ Տես՝ ընդհանուր առմամբ. Lambert-Abdelgawad, E., 'The Execution of Judgments of the European Court of Human Rights', 2002, Եվրոպայի խորհուրդ.

⁵⁶ Տես, օրինակ, Անթերփերթինգերն ընդդեմ Ավստրայի (*Unterpertinger v Austria*) գործը. Նախարարների կոմիտեի բանաձև DH(89)002, 18.1.89, Ջերսիլդն ընդդեմ Դանիայի (*Jersild v Denmark*) գործը, Նախարարների կոմիտեի բանաձև DH(95)212, 11.9.95, Սադակը, Ջանան, Դիքլեն և Դոդանն ընդդեմ Թուրքիայի (*Sadak, Zana, Dicle and Dogan v Turkey*) գործը, Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև ResDH(2002)59, 30.4.02:

⁵⁷ Տես, օրինակ, Բաց Դռները և Լավ Կանայք ընդդեմ Իռլանդիայի (*Open Door and Dublin Well Woman v Ireland*) գործը, Նախարարների կոմիտեի բանաձև DH(96)368, 25.6.96:

⁵⁸ Տե՛ս, օրինակ, Բարբարան, Մեսսեգուեն և Ջաբարդոն ընդդեմ Իսպանիայի (*Barbera, Messegue and Jabardo v Spain*) գործը, Նախարարների կոմիտեի բանաձև DH(94)84, 16.11.94:

⁵⁹ Տե՛ս, օրինակ, Մարիջնիսսենն ընդդեմ Նիդեռլանդների (*Marijnissen v Netherlands*) գործը, Նախարարների կոմիտեի բանաձև DH(85)004, 25.2.85:

⁶⁰ Տե՛ս, օրինակ, Վան Միչելենն ընդդեմ Նիդեռլանդների (*Van Mechelen and others v Netherlands*) գործը, Նախարարների կոմիտեի բանաձև DH(99)124, 19.2.99; Սադարը, Ջանա Դիլեն և Դոդանն ընդդեմ Թուրքիայի (*Sadar, Zana Dicle and Dogan v Turkey*) գործը, Նախարարների կոմիտեի բանաձև ResDH(2004)31, 2.4.04:

⁶¹ Տե՛ս, օրինակ, Դ-ն ընդդեմ Միացյալ թագավորության (*D v UK*) գործը, Նախարարների կոմիտեի բանաձև DH(98)10, 18.2.98:

⁶² Տե՛ս, օրինակ, Փաուելսն ընդդեմ Բելգիայի (*Pauwels v Belgium*) գործը, Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև DH(96)676, 15.11.96 (ռազմական տրիբունալների բարեփոխման մասին օրենքը):

⁶³ Տե՛ս, օրինակ, Բեաուներտինն ընդդեմ Ֆրանսիայի (*Beaumontin v France*) գործը, Նախարարների կոմիտեի բանաձև DH(95)254, 20.11.95:

⁶⁴ Տե՛ս, օրինակ, Նորվեգիայի Գերագույն Դատարանի մամլո հաղորդագրությունը, հրապարակված Բերգենս Տիդենդն ընդդեմ Նորվեգիայի (*Bergens Tidende v Norway*) գործով Եվրոպական դատարանի վճռից հետո: Նախարարների կոմիտեի բանաձև ResDH(2002)69, 11.7.02:

⁶⁵ Տե՛ս, օրինակ, Ասսենովն ընդդեմ Բուլղարիայի (*Assenov v Bulgaria*) գործը: Նախարարների կոմիտեի բանաձև ResDH(2000)109, 2.10.00, Սաունդերսն ընդդեմ Միացյալ թագավորության (*Saunders v UK*) գործը, Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև DH(2000)27, 14.2.00:

⁶⁶ Տե՛ս, օրինակ, Յագիզն ընդդեմ Թուրքիայի (*Yagiz v Turkey*) գործը: Նախարարների կոմիտեի բանաձև DH(99)2, 18.1.99:

Ինչ վերաբերում է արդարացի փոխհատուցման վճարմանն ու «անհատական միջոցառումների» իրականացմանը, ապա դիմողն իրավունք ունի առաջարկված կամ ձեռնարկված միջոցառումների ոչ պատշաճ լինելու, ներառյալ թե արդյոք վճարվել են վճռով սահմանված վնասի և ծախսերի փոխհատուցումը, մասին բողոքներով դիմել Նախարարների կոմիտեի քարտուղարություն (Նախարարների կոմիտեի Կանոնակարգի 6-րդ Կանոնը, որը վերաբերում է Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետին): Նամակի պատճեն պետք է ուղարկել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման Դեպարտամենտին, որը Նախարարների կոմիտեին օժանդակություն է ցուցաբերում և խորհրդատվություններ է տալիս վճիռների կատարման գործում:

Նախարարների կոմիտեն տարվա ընթացքում անցկացնում է վեց նիստ՝ նվիրված Եվրոպական դատարանի վճիռների կատարման վերահսկողության հետ անմիջականորեն կապված հարցերին: Անհրաժեշտության դեպքում հրատապ գործերը կարող են քննության առնվել նաև մյուս՝ «հերթական» նիստերում: Գործը Նախարարների կոմիտեի օրակարգում մնում է այնքան ժամանակ, քանի դեռ պատասխանող Կառավարությունը չի հայտնում, որ անհրաժեշտ միջոցառումները ձեռնարկվել են, և Նախարարների կոմիտեն չի համոզվում այդ միջոցառումների բավարար լինելու մեջ: Ցանկացած տեղեկատվություն և փաստաթուղթ, որոնք այդ համատեքստում Նախարարների կոմիտեին են ներկայացվել պատասխանող պետության կողմից, հրապարակային են (եթե Կոմիտեն այլ բան չի որոշում)⁶⁷: Յուրաքանչյուր նիստից առաջ առկա տեղեկատվության հակիրճ շարադրանքը և Նախարարների կոմիտեի կողմից դրան տրված գնահատականը սովորաբար ներառվում են նիստի համառոտագրված օրակարգում: Այդ տեղեկատվության հիման վրա Նախարարների կոմիտեի ընդունած որոշումը, և նիստում ներկայացված ցանկացած նոր տեղեկատվություն նույնպես հրապարակային են: Նիստից հետո փաստաթղթերը տեղադրվում են Նախարարների կոմիտեի կայքէջում:

Նախարարների կոմիտեն վճիռների կատարմանը նպաստելու նպատակով կարող է ձեռնարկել տարբեր քայլեր. այդ թվում, օրինակ, դիվանագիտական նախաձեռնությունները, «բարձր մակարդակի» հանդիպումների կազմակերպումը և միջանկյալ բանաձևերի ընդունումը: Երբ Նախարարների կոմիտեն համարում է, որ պատասխանող պետության կողմից տրամադրված տեղեկատվությունը վկայում է վճռի կատարման մասին, ապա ընդունվում է բանաձև, որում Կոմիտեն հայտարարում է, որ Կոնվենցիայի 46 հոդվածի 2-րդ կետի իմաստով կատարել է իր խնդիրը⁶⁸: Նախնական և վերջնական բանաձևերը հրապարակվում են Նախարարների կոմիտեի կայքէջում. դրանք կարելի է գտնել նաև Դատարանի HUDOC կայքում (տե՛ս ստորև՝ 12.2-ում): Բացի դրանից, ընտրված բանաձևերը հրապարակվում են Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների Տեղեկագրում (Human Rights Information Bulletin): Եթե վճիռների կատարումը ձգձգվում է հիմնավոր պատճառներով, Նախարարների կոմիտեն ընդունում է միջանկյալ բանաձև, որտեղ նշվում է, թե ինչ անհետաձգելի նախնական միջոցառումներ են ձեռնարկվել նոր խախտումների թիվը հնարավորինս նվազեցնելու համար, և նշվում է տվյալ հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ հետագա բարեփոխումների ժամանակացույցը: Այդպիսի միջանկյալ բանաձևի օրինակ, *Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի (Kalashnikov v Russia)* գործի կապակցությամբ, բերվում է ստորև ընգրծված տեքստով:

Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի (Kalashnikov v Russia) գործի (թիվ 47095 / 99) վերլուծություն

2002 թվականի հուլիսին Եվրոպական դատարանը *Կալաշնիկովը ընդդեմ Ռուսաստանի* գործով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի, 5-րդ հոդվածի 3-րդ կետի և 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտումներ արձանագրեց դիմողի նկատմամբ քրեական վարույթի հարուցման հետ կապված: Մասնավորապես, գործը ընդգծեց ռուսաստանյան բանտերի սարսափելի վիճակը (տե՛ս ստորև 7.3.3-ում):

Նախարարների կոմիտեն 2003 թվականի հունիսին այդ գործի առնչությամբ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի հիման վրա միջանկյալ բանաձև ընդունեց:

⁶⁷ Նախարարների կոմիտեի Կանոնակարգի 46(2) հոդվածին վերաբերող Կանոն 5:

⁶⁸ Տե՛ս, օրինակ, Ասսենովն ընդդեմ Բուլղարիայի (*Assenov v Bulgaria*) գործը: Նախարարների կոմիտեի բանաձև ResDH(2000)109, 2.10.00:

Բանաձևը հաստատում է. որ պատասխանող կառավարությունը սահմանված ժամկետում դիմողին է վճարել Դատարանի վճռով նախատեսված գումարը (5 հազար եվրո, որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում և 3 հազար եվրո՝ ծախսերի ու ծախքերի հատուցում). վճիռը կայացվել էր 2002 թվականի հուլիսի 15-ին և վերջնական էր դարձել 2002 թվականի հոկտեմբերի 15-ին, իսկ գումարը վճարվել էր 2002 թվականի դեկտեմբերի 17-ին, այսինքն՝ վճիռը վերջնական դառնալուց հետո երեք ամսվա ընթացքում:

Բանաձևում նաև նշվել էր, որ Կոնվենցիայի 46-րդ հոդվածը պետություններից պահանջում է ճշտությամբ կատարել վճիռները, ինչը ներառում է դատարանի վճռով արձանագրված Կոնվենցիայի համանման խախտումները կանխելուն ուղղված ընդհանուր բնույթի միջոցառումները, և մատնանշել է, որ դրա անհրաժեշտությունն առավել հրամայական է, եթե վճիռն ի հայտ է բերել կառուցվածքային հիմնախնդիրներ, որոնք կարող են Կոնվենցիայի նոր նմանատիպ մեծաթիվ խախտումների հանգեցնել: Բանաձևում.

- մատնանշվել էր նախնական կալանքի վայրերում գերծանրաբեռնվածության նշանակալի նվազեցումը և սանիտարական պայմանների բարելավումը,
- մատնանշվել էր, որ կառուցվածքային հիմնախնդիրները նկատի ունենալով պահանջվում են հետագա միջոցառումներ՝ ուղղված նախ և առաջ գերծանրաբեռնվածության խնդրի լուծմանն ու սանիտարական պայմանների բարելավմանը Ռուսաստանի 89 մարզերից 57-ում,
- Ռուսաստանի իշխանություններին առաջարկվել էր իրավիճակի բարելավման մասին տեղեկացնել Նախարարների կոմիտեին, և
- որոշվել էր հետագա ձեռնարկվելիք միջոցառումները քննության առնել ոչ ուշ քան 2004 թվականի հոկտեմբերին կայանալիք հանդիպման ժամանակ:

Սակայն, եթե վճիռների կատարման հետ կապված խնդիրներ (կամ անորոշություն) կան, Նախարարների կոմիտեն կարող է ընդունել նոր, ավելի խիստ ձևակերպումներ պարունակող բանաձևեր, որոնք կպահանջեն պատասխանող պետությունից ձեռնարկել տվյալ վճռի կատարման համար անհրաժեշտ քայլեր⁶⁹: Եթե առկա են շարունակական բնույթ կրող համակարգային հիմնախնդիրներ, Նախարարների կոմիտեն հրապարակում է հետագա միջոցառումներ պահանջող մի շարք բանաձևեր, պահանջելով իշխանությունների կողմից հետագա գործողությունների ձեռնարկում, ինչպես, օրինակ, Իտալիայի քաղաքացիական և վարչական դատարաններում վարույթների չափազանց երկար տևողությանը վերաբերող բողոքների դեպքում⁷⁰: Բարեփոխումների իրականացման մասին Իտալիայի կառավարության հաղորդումների հիման վրա Նախարարների կոմիտեն 1995 թվականին ավարտեց այդ հարցի քննությունը, կրկին ստիպված լինելով անդրադառնալ դրան 1997 թվականին՝ պայմանավորված Դատարան ներկայացվող նմանատիպ գործերի չնվազող մեծ քանակությամբ: 1999 թվականին Նախարարների կոմիտեն միջանկյալ բանաձև ընդունեց, որը վկայակոչեց, որ այդպիսի գործերը սկսած 1980-ականների վերջերից անչափ շատ են եղել, և որ, չնայած Իտալիայի իշխանությունների ձեռնարկած բազմաթիվ միջոցառումներին, համակարգային հիմնախնդրի հետևանք հանդիսացող 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտումների թիվը չի նվազել: Ուստի, միջանկյալ բանաձևը ընդգծեց, որ հիմնական խնդիրները դեռ առկա են և Իտալիայի իշխանություններին պարտավորեցրեց ձեռնարկել հետագա քայլեր և որոշեց խնդրին կրկին անդրադառնալ մեկ տարվա ընթացքում⁷¹:

Որպեսզի Նախարարների կոմիտեն հավաստիանա, որ Իտալիան պատշաճ կերպով վերանայել է իր դատական համակարգի արդյունավետությունը, այն Իտալիային կոչ արեց շարունակել բարեփոխումը դասել առաջնային գերակայությունների թվին, և 2000 թվականին ստեղծել տարեկան հաշվետվության համակարգ, որը Նախարարների կոմիտեին պետք է ներկայացնել տեղեկատվություն այս ոլորտում ձեռքբերումների վերաբերյալ⁷²: Այս գործընթացը մինչ այժմ շարունակվում է: Իր Հայտարարության մեջ (2004 թվականի սեպտեմբեր), ի պատասխան երրորդ տարեկան հաշվետվության, Նախարարների կոմիտեն

⁶⁹ Տե՛ս, օրինակ, Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև ResDH(2001) 79, 26.6.01 (re *Mathews v UK*), Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև ResDH(2004) 39, 2.6.04 (re *A v UK*):

⁷⁰ Նախարարների կոմիտեի բանաձև DH(79)336, 11.7.97, Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև DH(99)436, 15.7.99, Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև DH(99)437, 15.7.99, Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև ResDH(2000)135, 25.10.00:

⁷¹ Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև DH(99)437, 15.7.99:

⁷² Տե՛ս, Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև ResDH(2000)135, 25.10.00:

մտահոգություն էր հայտնել առ այն, որ դեռևս 2000 թվականին հայտարարված որոշ կարևոր բարեփոխումներ մինչ այդ ժամանակ դեռ չէին իրականացվել⁷³:

Սկսած 1990-ական թվականներից՝ Եվրոպական դատարանը Կոնվենցիայի լուրջ խախտումներ է արձանագրել (հատկապես Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների), որոնք կատարվել էին անվտանգության ուժերի կողմից թուրքիայի հարավ-արևելքում⁷⁴: Այդ որոշումները հանգեցրին Նախարարների կոմիտեի 1999 և 2000 թվականների աննախադեպ բանաձևերի ընդունմանը: Առաջին բանաձևում⁷⁵, որ վերաբերում է 13 վճիռների, որոնցով Դատարանը 2-րդ, 3-րդ, 6-րդ, 8-րդ, 13-րդ հոդվածների և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտումներ էր արձանագրել, նշվում էր, որ. «արձանագրված խախտումներն առաջացրած հիմնական խնդիրները դեռ առկա են, հատկապես, արտակարգ դրության մեջ գտնվող տարածքում, և, մասնավորապես, այդ խախտումների կապակցությամբ ձեռնարկված հետաքննությունները մինչ այժմ որոշակի և բավարար արդյունքներ չեն տվել»: Բանաձևը թուրքիայի իշխանություններին կոչ էր անում վերակազմակերպել և բարելավել անվտանգության ուժերի վարժեցումը, անհապաղ ավարտել անվտանգության ուժերի աշխատակիցների դեմ քերական վարույթի իրականացման համակարգի բարեփոխումները և բարեփոխել դատախազական համակարգը՝ «նպատակ ունենալով ապագայում ապահովել դատախազների անկախությունը և անհրաժեշտ միջոցներ՝ իրենց լիազորությունները չարաշահող և մարդու իրավունքները խախտող անվտանգության ուժերի աշխատակիցներին բացահայտելու և պատժի ենթարկելու համար»: 2002 թվականին ընդունված Երկրորդ բանաձևը⁷⁶ վերաբերում էր 42 վճիռների ու որոշումների, որոնք ճանաչում էին թուրքիայի պատասխանատվությունը Կոնվենցիայի բազմաթիվ խախտումների համար՝ ներառյալ սպանություններ, խոշտանգումներ, գույքի ոչնչացում և ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների բացակայություն: Բանաձևը նշում էր թուրքիայի իշխանությունների կողմից ձեռնարկված տարբեր քայլերը՝ ներառյալ սահմանադրական և օրենսդրական փոփոխությունները, համապատասխան հրահանգների ընդունումը և արտակարգ դրությունն աստիճանաբար հանելը: Սակայն բանաձևը նաև անհանգստություն էր հայտնում խոշտանգումների ու վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ նոր բողոքների կապակցությամբ, և լրացուցիչ վերապատրաստման (ոստիկանության, ժանդարներիայի, դատախազների ու դատավորների համար) ու հետագա բարեփոխումների անցկացման կոչ էր անում:

Նախարարների կոմիտեն կարող է նաև խիստ բանաձևեր ընդունել, եթե անհատական գործերի կապակցությամբ վճռի կատարման խնդիրներ են ծագում: Օրինակ, *Սոցիալիստական կուսակցությունը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Socialist Party and others v Turkey)* գործով վճիռ կայացնելուց հետո Նախարարների կոմիտեն ընդունել է բանաձև, որը պնդում էր, որպեսզի իշխանություններն անհապաղ միջոցներ ձեռնարկեն՝ վերացնելու համար կուսակցության նախագահի նկատմամբ կայացրած (որը Եվրոպական դատարանի վճռից հետո անփոփոխ էր թողնվել) մեղադրական վճռի բոլոր հետևանքները⁷⁷: *Սկոցարին և Ջունտան ընդդեմ Իտալիայի (Skozzari and Giunta v Italy)* գործով իր վճռում, Դատարանը, *inter alia*, 8-րդ հոդվածի խախտում արձանագրեց՝ առաջին դիմողի երեխաներին պետության խնամակալությանը հանձնելուց հետո կոնկրետ համայնքում բնակեցնելու հիմքով: Նախարարների կոմիտեն հետագայում հրապարակեց միջանկյալ բանաձև⁷⁸, որը նշում էր, թե երեխաները շարունակում են գտնվել այդ համայնքում, և կոչ էր անում կարգավորել նրանց տեղավորման հարցը հաշվի առնելով այն, որ Բելգիայի իշխանությունները դիմել էին Իտալիայի իշխանություններին՝ բարձրացնելով Բելգիայում երեխաների տեղավորման հարցը (նկատի ունենալով առաջին դիմողի՝ Բելգիայում բնակվելու փաստը): Հետագա ձգձգումների պատճառով երկրորդ միջանկյալ բանաձևը⁷⁹ *inter alia* Իտալիայի իշխանություններին կոչ արեց «շուտափույթ կերպով ձեռնարկել կոնկրետ ու

⁷³ Իտալիայում դատաքննությունների տևողության մասին Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի Հայտարարությունը, 466ա (2004), 30.9.04:

⁷⁴ Թուրքիայի կողմից 10-րդ հոդվածի կրկնվող խախտումների կապակցությամբ, տես՝ Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև ResDH(2001)106 և Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև ResDH(2004)38, 2.6.04:

⁷⁵ Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև DH(99)434, 9.6.99:

⁷⁶ Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև ResDH(2002)98, 10.7.02:

⁷⁷ Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև DH(99)245, 4.3.99, Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև DH(99)529, 28.7.99:

⁷⁸ Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև ResDH(2001)65, 29.5.01:

⁷⁹ Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև ResDH(2001)151, 3.10.01:

արդյունավետ միջոցներ՝ իրենց մորից երեխաների անդառնալի բաժանումը կանխելու նպատակով»:

Վճիռները կատարելուց պատասխանող պետության հրաժարվելու պատճառով ծագած հիմնախնդիրները կարող են հանգեցնել չափազանց խիստ ձևակերպումներով բանաձևի ընդունման, որը կհիշեցնի Դատարանի վճիռներն անվերապահորեն կատարելու պարտավորության մասին, ընդգծելով, որ դրանց կատարումը Եվրոպայի Խորհրդին անդամակցելու պայման է համարվում, և, հնարավոր է, որ նույնիսկ մասնակից երկրներին կոչ անի՝ ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք նրանք տեղին են համարում, ապահովելու համար վճիռների կատարումը: Դատարանի կողմից սահմանված արդարացի փոխհատուցման չվճարումը *Ստրան Գրիկ Ռեֆայներիսը և Ստրատիս Անդրեադիսը ընդդեմ Յունաստանի (Stran Greek Refineries and Stratis Andreadis v Greece)* գործով 1994 թվականի վճռի վերաբերյալ Նախարարների կոմիտեի 1996 թվականի բանաձևի առարկան էր հանդիսանում⁸⁰: Յետագայում ընդունված բանաձևը հաստատեց, որ Յունաստանի կառավարությունը դիմողներին հասանելիք գումարը (ավելի քան 30 մլն դոլար) վճարել է 1997 թվականի հունվարին⁸¹: Նմանապես, Թուրքիայի կառավարության կողմից, *Լոիզիդու ընդդեմ Թուրքիայի (Loizidou v Turkey)* գործով 1998 թվականի վճռով սահմանված վնասի փոխհատուցման չվճարումը Նախարարների կոմիտեի մի քանի բանաձևերի ընդունման պատճառ դարձավ, որոնք գնալով ավելի խիստ ձևակերպումներ էին ստանում և, ի թիվս այլոց, մատնանշում էին Թուրքիայի կողմից վճիռները չկատարելու «ցավալի փաստը»⁸²: Ի վերջո, *Լոիզիդուի* գործով Դատարանի սահմանած գումարները Թուրքիայի կառավարությունը վճարեց (տոկոսների հետ միասին) 2003 թվականի դեկտեմբերին⁸³: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման անհրաժեշտության մասին նշվել էր նաև Եվրոպական Միությանը Թուրքիայի անդամակցության-համագործակցության մասին 2003 թվականի համաձայնագրում⁸⁴:

Նախարարների կոմիտեի Կանոնները դիմողին ուղղակիորեն թույլ չեն տալիս, սակայն նաև ուղղակիորեն չեն արգելում, «ընդհանուր նշանակության միջոցառումների» վերաբերյալ գրավոր դիտողություններ ներկայացնել (ի տարբերություն արդարացի փոխհատուցման կամ «անհատական միջոցառումների»): Համապատասխանաբար, դիմողի ներկայացուցիչը Նախարարների կոմիտե դիմելու մասին (պատճենները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման Դեպարտամենտ ուղարկելով հանդերձ) պետք է մտածի, եթե առկա են «ընդհանուր նշանակության միջոցառումներ», որոնք, նրա կարծիքով, Դատարանի վճռի համաձայն պետք է իրականացնի պետությունը: Թեպետ, «ընդհանուր նշանակության միջոցառումների» հարցով Նախարարների կոմիտե դիմելու համար դիմողը չունի *locus standi*, քարտուղարության համար կարող է կարևոր լինել դիմողների և/կամ նրանց ներկայացուցիչների կարծիքն իմանալը: Արդյունավետ կարող է լինել նաև, եթե դիմողի ներկայացուցիչը անմիջականորեն դիմի [Դատարանում] Եվրոպայի Խորհրդի այլ մասնակից պետությունների ներկայացուցիչներին, «ընդհանուր նշանակության միջոցառումների» վերաբերյալ նրանց որոշակի դիրքորոշում գրավելու կոչով (Նախարարների կոմիտեի վերահսկողի դերի կոնտեքստում): Նմանապես, կարևոր նշանակություն ունեցող գործերում կարող է արդյունավետ լինել իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների կողմից Նախարարների կոմիտե (պատճենները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման Դեպարտամենտ ուղարկելով հանդերձ) և [Դատարանում] պետությունների ներկայացուցիչներին դիմելը՝ մատնացույց անելով այն «ընդհանուր նշանակության միջոցառումները», որոնք հարկավոր է իրականացնել:

Ինչպես նշված է վերը՝ 1.1-ում, Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՎ) նույնպես մասնակցում է Եվրոպական դատարանի վճիռների կատարման

⁸⁰ Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև DH(96)251, 15.5.96:

⁸¹ Նախարարների կոմիտեի վերջնական բանաձև DH(97)184, 20.3.97:

⁸² Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև DH(99)680, 6.10.99, Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև DH(2000)105, 24.7.00; DH(2001)80, 26.6.01; Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև ResDH(2003)174, 12.11.03:

⁸³ Նախարարների կոմիտեի միջանկյալ բանաձև ResDH(2003)190, 2.12.03:

⁸⁴ ԵՄ մտնելու կապակցությամբ Թուրքիայի հետ գործընկերությունում բովանդակվող սկզբունքների, գերակայությունների, նպատակների ու պայմանների մասին Խորհրդի 2003թ. մայիսի 19-ի որոշումը (2003 / 398 / ԵՄ):

վերահսկողությամբ⁸⁵: Գործնականում դա իրականացվում է իրավական հարցերի և մարդու իրավունքների Կոմիտեի կողմից, որը օժանդակում է Նախարարների կոմիտեին: Իրավական հարցերի և մարդու իրավունքների Կոմիտեն իր ուշադրությունը սովորաբար կենտրոնացնում է ավելի քան հինգ տարի չլուծված, ինչպես նաև առավել հրատապ կամ կարևոր գործերի վրա: Կոմիտեն պետության ներկայացուցիչներից բացառություն է պահանջում կառավարության կողմից վճիռները չկատարելու վերաբերյալ, և առաջարկություններ է ներկայացնում Նախարարների կոմիտեին: Դա իր հերթին կարող է հանգեցնել Նախարարների կոմիտեի պաշտոնական պատասխանին⁸⁶: Համապատասխանաբար, դիմողները և/կամ նրանց ներկայացուցիչներն այդ գործընթացին կարող են ներգրավվել իրավական հարցերի և մարդու իրավունքների Կոմիտեի և/կամ ԵԽԽԿ-ում պետության ներկայացուցիչների հետ հաղորդակցությունների միջոցով: Խորհրդարանականները նույնպես կարող են բանավոր ու գրավոր հարցերի և այլ նախաձեռնությունների միջոցով աջակցել կոնկրետ գործերով Նախարարների կոմիտեի և պատասխանող պետությունների վրա ճնշում գործադրելու առումով:

Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների Հանձնակատարը կարող է հանդիպել պետական պաշտոնյաների հետ՝ քննարկելու համար Եվրոպական դատարանի վճիռներում ընդգծված համակարգային բնույթ ունեցող խնդիրները, կամ քաղաքական տեսակետից առավել վիճելի գործերի հետևանքները (Հանձնակատարը, սակայն, լիազորված չէ միջամտել անհատական գործերով վճիռների կատարմանը): Բացի դրանից, վճիռների կատարման հարցերը, բացառիկ դեպքերում (ինչպես, օրինակ, *Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի* գործում) կարող է հանձն առնել Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը⁸⁷:

Սա կարող է Եվրոպայի Միությանն անդամակցել ցանկացող պետությունների վրա ներգործության լրացուցիչ լծակ լինել, քանի որ անդամակցության վերաբերյալ պայմանագրերը կարող են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան պահպանելու կոնկրետ պարտավորություններ ներառել⁸⁸: Այս լծակը, նմանապես, կարող է օգտագործվել նաև Եվրոպայի Միության անդամներ հանդիսացող պետությունների հանդեպ, քանի որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահպանումը մեկն է հիմնարար այն սկզբունքներից, որոնք պետք է պահպանվեն մասնակից պետությունների կողմից, ուստի Եվրոպական դատարանի վճիռները չկատարելը կարող է պատճառ լինել Եվրոպական Միության առջև ստանձնած պարտավորությունների մասին հարցի բարձրացման համար:

Դիմողին խորհուրդ է տրվում նաև այդ հարցը բարձրացնել անմիջականորեն կառավարության առջև և օգնության համար դիմել համապատասխան հասարակական կազմակերպություններին՝ հասարակության ուշադրությունը համակարգային բնույթ ունեցող խնդիրների վրա հրավիրելու նպատակով: Կհաջողվի արդյոք դիմողներին հասնել քաղաքականության կամ պրակտիկայի փոփոխությունների՝ կախված է նրանից, թե ինչքանով նրանք կարող են ապացուցել, որ իրենց գործերում արձանագրված Կոնվենցիայի խախտումն արտացոլում է համապատասխան համակարգում կամ պրակտիկայում առկա ընդհանուր նշանակության հիմնախնդիր, այլ ոչ թե եզակի դեպք:

Եթե վճիռների կատարման հետ կապված պատասխանող պետության կողմից առաջարկվող միջոցառումները դիմողին չեն բավարարում, և եթե դրանից ծագող հարցերը որոշակի բարդություն են ներկայացնում (օրինակ՝ Դատարանի վճիռների ճիշտ մեկնաբանության կապակցությամբ), դիմողին խորհուրդ է տրվում Դատարան դիմել նոր գանգատով: Թեպետ բարդություն չներկայացնող գործերով Նախարարների կոմիտեն կարող է խախտում թույլ տված պետության հանդեպ զգալի ճնշում գործադրել, նրա կազմը և գործելակերպը դժվարություններ են ստեղծում երբ խնդիրը կայանում է իրավունքի խթան հարցերը լուծելու մեջ, հատկապես եթե պատասխանող պետությունն ընդդիմանում է առաջարկվող միջոցառումներին: Այդ իսկ պատճառով, դիմողները պետք է լրացուցիչ գանգատներով Դատարան դիմելու մտածեն,

⁸⁵ Տես՝ ԵԽԽԿ-ի 1226 (2000) Բանաձեռը, «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների կատարումը», 28.9.00:

⁸⁶ Տես, օրինակ, Written Question № 428 to the Chair of the Committee of Ministers by Mr Jurgens: ‘Execution of the European Court’s judgments by Turkey’, CM/AS (2003) Quest 428 final, 5.9.03:

⁸⁷ Թիվ 15318/89, 18.12.96, (1997) 23 EHRR 513:

⁸⁸ Տես, օրինակ, ԵՄ մտնելու կապակցությամբ Թուրքական հանրապետության հետ գործընկերության մասին պայմանագրում բովանդակվող սկզբունքների, գերակայությունների, միջնակա նպատակների ու պայմանների մասին Խորհրդի 2001թ. մարտի 8-ի Որոշումը (2001 / 235 / ԵՄ):

Եթե վճիռների կատարումը մեկնաբանության նման բարդ խնդիրներ է առաջացնում: Եթե հիմնախնդիրն պարզ է դառնում վաղ փուլում, դիմողները կարող են նաև վճիռների մեկնաբանման համար Դատարանին դիմում ներկայացնել (տե՛ս վերը՝ 4.3-ում): Եթե դիմողն այդ խնդրով Դատարան է դիմում, Նախարարների կոմիտեն սովորաբար հետաձգում է վճիռի կատարման վերաբերյալ իր քննությունը, մինչև Դատարանի կողմից որոշում կայացնելը: Այս կապակցությամբ կարևոր է նկատի ունենալ, որ Դատարանը սովորաբար առաջին հերթին քննում է այն հարցը, թե արդյոք նոր ստեղծված իրավիճակը խախտում է Կոնվենցիայի նյութական նորմը, այն դեպքում, երբ Նախարարների կոմիտեն քննության է առնում այն հարցը, թե արդյոք պետությունն ապահովել է *restitutio in integrum*-ը: Դիմողները պետք է այդ երկու մոտեցումները հաշվի առնեն, երբ նրանք վճիռների կատարման հետ կապված հարցեր են վիճարկում: Մեհեմին ընդդեմ Ֆրանսիայի (*Mehemi v France* (թիվ 2)) գործում⁸⁹ Ալժիրի քաղաքացի դիմողին, թմրանյութերի անօրինական վաճառքի համար դատապարտվելուց հետո, արտաքսվել էր Ֆրանսիայից: 1997 թվականի սեպտեմբերի 6-ի իր վճռով Եվրոպական դատարանը հաստատեց, որ դիմողի վտարումը մի երկիր, որի հետ նա ոչ մի կապ չունի, 8-րդ հոդվածի խախտում է հանդիսանում: Հետագայում դիմողը ևս մեկ զանգատ ներկայացրեց այն բանից հետո, երբ ներպետական դատարանը, որպես Եվրոպական դատարանի վճիռի կատարում որոշեց արտաքսման մասին որոշման գործողության ժամկետը սահմանել 10 տարի: Այդ զանգատում նա, 8-րդ հոդվածի հիման վրա, բողոքում էր միայն արտաքսման շարունակվող հետևանքներից ու այն պայմաններից, որոնք սահմանվել էին Ֆրանսիայում նրա բնակության հետ կապված: Դատարանի պալատն այդ վճռում սահմանում էր, որ, չնայած ինքը չունի վճիռի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորություն, ոչինչ իրեն չի խանգարում հետազոտելու առաջին վճիռի մեջ չլուծված նոր հարց արծարծած հետագա բողոքները (թեպետ, ելնելով փաստերից, 8-րդ հոդվածի կամ Թիվ 4 Արձանագրության 2-րդ հոդվածի խախտումներ չեն եղել): Վճիռի կատարման հարցում իր իրավասության առնչությամբ Դատարանի դիրքորոշումը, հավանաբար, այն ժամանակից հետո փոխվել է, ինչի մասին վկայում են Թիվ 14 Արձանագրությունը և *Իլիաշկուի* գործով⁹⁰ Մեծ պալատի վճիռը, որտեղ Դատարանը հստակ ընդգծում է, որ Կոնվենցիայի 46-րդ հոդվածը կխախտվի, եթե վճիռները կատարելու ուղղությամբ չձեռնարկվեն որոշակի միջոցներ:

Ինչպես նշվեց վերը, Եվրոպական դատարանի վճիռները կատարելու հարցում լուրջ խնդիրներ եղել են միայն բացառիկ դեպքերում՝ այնպիսիք, ինչպես *Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի* գործն էր: *Իլիաշկուն և այլոք ընդդեմ Ռուսաստանի և Մոլդովայի* գործով⁹¹ վճիռները Դատարանի կողմից 2004 թվականի հուլիսին հրապարակվելուց հետո, Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարությունը հայտարարեց, որ «Մոսկվան տարակուսանք է հայտնում այդ գործի և Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակնհայտ քաղաքական կողմնակալության կապակցությամբ»⁹²: Հաշվի առնելով այս գործերով վեր հանված դժվարությունները և նպատակ ունենալով ընդլայնել ապագայում ծագող խնդիրներին դիմակայելու Նախարարների կոմիտեի հնարավորությունները, Թիվ 14 Արձանագրության համաձայն նոր ընթացակարգ կսահմանվի, ամրապնդելու համար Նախարարների կոմիտեի ազդեցության հնարավորությունները (տես՝ ստորև ընդգծված տեքստով):

Թիվ 14 Արձանագրությամբ առաջարկվող փոփոխություններ. վերջնական վճիռի կատարումից հրաժարվելը

Համաձայն Կոնվենցիայի Թիվ 14 Արձանագրության (տե՛ս վերը՝ 1.2.2-ում), եթե Նախարարների կոմիտեն (ծայների երկու երրորդի մեծամասնությամբ) գտնում է, որ պետությունը հրաժարվում է կատարել Դատարանի վճիռը, ապա կարող է այդ հարցը հանձնել Դատարան՝ որոշելու համար, թե արդյոք պետությունը խախտել է Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իր պարտավորությունները (Թիվ 14 Արձանագրության 16-րդ հոդված, որով փոփոխություններ է մտցվում Կոնվենցիայի 46-րդ հոդվածում): Գործնականում այդ ընթացակարգը, հավանաբար, կկիրառվի միայն բացառիկ դեպքերում: Ցավոք, բացակայում է ներգործության կոնկրետ միջոց այն դեպքերի համար, երբ Եվրոպական

⁸⁹ Թիվ 53470/99, 10.4.03, (2004) 38 EHRR 16:

⁹⁰ Թիվ 48787/99, 8.7.04, կ. 487 և այլն:

⁹¹ Թիվ 48787/99, 8.7.04:

⁹² *The Moscow Times*, 9.7.04: !

դատարանը գտնում է, որ պետությունն իսկապես չի կատարում Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իր պարտավորությունները, և հնարավոր է, որ վիճահարույց քաղաքական գործերում պետությունները կջանան օգտագործել այս՝ երկրորդ հրապարակային ֆորումի, հնարավորությունը, որպեսզի փորձեն վերստին պաշտպանել իրենց դիրքորոշումը: